



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636.2  
հ-62

ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ  
ՅԵՎ.  
ՄԵԾԱՑՆԵԼ ԳՈԶԻՆԵՐԻՆ  
ՏՈՀՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻՆԵՐԻ  
ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐ

(Խոզաբուծական Կոլտնեկենուրոնի հրահանգը)

ՀՐԱՄԱՆԻ ԽՈԶԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱՐ ԿՈԼՏՆԵԿԵՆՈՒՐՈՆԻ

ԾԵՐԵՎԱՆ

1932

26.04.2013

22.040

636.2 44  
h-62

ԻՆՉՊԵՍ ՇՆՏՐԵԼ ՅԵՎ ՍԵՄԱՑՆԵԼ ԳՈՅԻ-  
ՆԵՐԻՆ ՏՈՂՄԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՅԵՎ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱԽՈՂՋ ԾՆՈՂՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ  
Ա.ՄՈՒԻՐ ԳՈՅՃՆԵՐ

Պատկանական համար  
Դիմում 6975 (բ)  
Համար 6293  
Տիրած 1500

Տոհմական աշխատանքի բնագավառում  
բառվարար հաջողություն ձեռք բերելու և  
~~Խողիքի յերաժակը արագ կերպով ազնվաց-~~  
~~նելու համար խողաբուծական Փերմաները~~  
~~պետք է ծիչու հիմունքների վրա դնեն դոճի-~~  
~~ների ընտրության և մեծացման գործը։ Դրա~~  
~~համար առհմացու դոճիները ընարելիս ամե-~~  
~~նից առաջ հարհավոր և ուշադրություն գտն-~~  
~~են նրանց ծնողների ցեղի, վորակի և առող-~~  
~~ջության վրա։ Հայրը և մայրը պետք է ու-  
նենան ուժեղ կաղմանք, ամուր վոսկրա-  
կազմ, ուղիղ ու հարթ մեջք, ամուր և ու-  
ղիղ գրվածքով վոտքեր, նրանք պետք ե-  
նին բովորովին առողջ և ունենան միջակ  
չաղություն։ Ծնողները, չպետք է ունենան  
կոպիտ, միխրուն կամ թե քնքույշ, առանց  
մաղի չափից ալիւթ գարդաշած կաղմանք։~~

Նեղ, սուր կամ կարճ մոպսանման (չնիկ-  
ժոպս) դւռնչ, նեղ կուրծք, յերկարավում,  
արատավոր գուաքեր, թույլ մեջք, նեղ և  
կախված հետույք, անհամաշափ իրան:

Նրանք պետք ե սնված լինեն պտղառատ  
ծնողներից, զորոնք լավ են ոգտազործում  
կերը, պետք և ունենան ամուր, առողջ ա-  
տամներ: Վարազները պետք ե լինեն խոշոր,  
սպիտակ անգլիական ցեղից, զտարյուն,  
այսինքն հոր և մոր գծով ունենան հայտնի  
ժաղում: Վարազը պետք ե ունենա արտա-  
զրողի ուժեղ արտահայտված տեսք:

Մերուները պետք ե ունենան մայրական  
լավ հատկություններ, լինեն բազմապո-  
տուզ, ունենան լավ զարդացում, 10—12-ից  
վոչ պակաս պտուկներ, լինեն կաթնառատ  
և ընդունակ ծնելու խոշոր ու հավասար  
գոճիներ և կարւզանան լավ կերակրել նը-  
րանց:

Մերուները պետք ե լինեն զտարյուն  
(մի ցեղից), բայց կարող են լինել և խառ-  
նուրդ, այսինքն ծնողներից մեկի գծով ու-  
նենան հայտնի ծագում:

#### ԳՈՃԻՆԵՐԻ ԸՆՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրենք տոհմացու ընտրված գոճիները  
պետք ե կերակրվեն իրենց մոր կաթով ութ

շաբաթից վոչ պակառ. ծծից կտրվելիս նը-  
րանց կենդանի քաշը պետք է լինի 10-12  
կիլոգրամ: Իրեն տոհմացու և վերաբու-  
ղության համար ընտրվում են գարնանը  
ծնած գոճիներից, վորովհետև դրանք աշնան  
գոճիներից ավելի խոշոր և ավելի ուժեղ  
են լինում:

Իրենք տոհմացու ընտրված գոճիները  
չպետք է լինեն չափից ավելի կերակրված,  
գանդաղաղաբժ, ծույլ և չափաղանց քնիուու:  
Ճարպակարված գոճիներն իբրև տոհմացու  
անպետք են:

Տոհմացու գոճիները պետք ե լինեն խո-  
չոր, ամուր, լայն վոսկրակաղմով, առանց  
վորես արատի, նրանք պետք ե ունենան  
ամուր, ուղիղ և լայն զրվածքով, ծնկների  
մոտ իրար չմոռեցած, վոտքեր: Գոճիները  
վոտքերի վրա պետք ե կանգնեն հաստատ ու  
վստահ, յերերուն քայլվածք չպետք ե ու-  
նենան: Նրանք պետք ե ունենան յերկար  
ու լայն իրան, լայն, ուղիղ ու հավասար  
մեջք, (թիակների հետեւի մասում փոս ըն-  
կած չպետք ե լինի): Պետք ե ունենան նաև  
լայն, ամուր, վոչ կախ ընկած  
հետույք, ամուր գառկատեղի, լավ զարդա-  
ցած զիստեր (բուլ), մրկար, ուղիղ, վոչ  
շատ ծանր գլուխ, կենդանի, պարզ ու պայ-

ծառ աչքեր, խոր ու լայն կուրծք, յերկար  
ուժեղ կորացած կողեր, խոր ու վոչ ձգված  
փոր: Կաշին պետք է լինի հարթ և փայ-  
լուն, ծածկված քնքուշ մաղերով: Գոճի-  
ները պետք են լինեն բոլորովին առողջ և  
պատկանեն անդլիական խոշոր ու սպիտակ  
ցեղին կամ նրա խառնուրդին:

Տոհմացու վարազները պետք են լինեն ա-  
վելի խոշոր, վոսկրոտ, քան մերուները:  
Եղի նմանություն ունեցող, քնքացած վա-  
րազներն իբրև տոհմացու անպետք են:  
Տոհմացու վարազները պետք են ունենան կա-  
նոնավոր զարգացած սեռական գործարան:  
Տարբեր մեծության ձիեր կամ մեկ ձու ու-  
նեցող վարազներին իբրև տոհմացու չեն  
պահում: Տոհմացու վարազիկը պետք են ու-  
նենա հանդիսատ, վոչ չար բնավորություն:

## ԾՆԵԼՈՒ ՄՈՏ ՄԵՐՈՒԻՆՆԵՐԻ ՅԵՎ, ԳՈՅՃԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Առողջ և ամուռ գոճիներ ստանալու համար  
անհրաժեշտ են նրանց մասին հոգալ դեռ ծըն-  
դելուց առաջ:

1. Մերուններին բեղմնավորելիս խուռա-  
փել նեղ ազգակցական զուգավորումից, վոչ  
մի զեպքում թույլ չտալ, վար տղան մորը  
ծածկի, յեղբայրը՝ քրոլը, հայրը՝ աղջկան:

8

2. Զահել մերուններին առաջին անգամ  
զուգավորել 9-10 ամսական հասակից վոչ  
վաղ, վորովհետով անժամանակ բեղմնավոր-  
գած մերունները ծնում են շատ մանր գո-  
ճիներ:

3. Տոհմաբուծական ֆերմաներում կիրա-  
ռել միայն ձեռքի զուգավորում:

4. Պետք է իբրեւ տոհմացու ընտրել գար-  
նանը և ամառը (փետրվար-հոկտեմբեր)  
ժնված գոճիներից, վորպեսով նրանք հնա-  
րավորություն ունենան լայն սպասարկութել  
արտօը, արեն ու ողը և կանոնավոր զարգա-  
նան:

5. Ծնելուց յերկու շաբաթ առաջ հղի  
մերուններին պետք է ընդհանուր յերամա-  
կից բաժանել և պահել առանձին, նախորդք  
ախտահանված և կրով սպիտակացրած վան-  
դակում. մերունին պետք է լվանալ կանաչ  
ապոնով և կրեոլինի 20 տոկոսային լու-  
ծույթով:

6. Խողանոցի տաքսությունը, վորտեղ կա-  
սարվում է ծնունդը, պետք է լինի 10-12°:

7. Ծնած մայրերին պետք են խնամի փոր-  
գմած խողապահը:

8. Նոր ժնված գոճիների բերանն ու քիթը  
պետք են լորձունքից մաքրել, պորտը կտրել

7

5—7 սանտիմեոր յերկարությամբ մկրա-  
տով, վորը պետք է նախորոք ախտահանված  
լինի կրեռլինի 2% ային լուծույթով։ Գո-  
ճիներին պետք է մաքրել փափուկ չորով և  
զնել փափուկ ծղնոտով պատրաստված ար-  
կղի մեջ։ Խոզապահը պետք է հետեւի, վոր-  
ակաղի մերունն իր ծինը չուտի։

9. Ծնելուց 1—2 ժամ հետո գոճիներին  
թողնել մոր մոս՝ ծծելու համար։ յեթե  
մայրը ջղային է, հարկավոր է դոճիների  
ատամները կոտրել։ Յուրաքանչյուր մոր  
մոտ թողնել ծծելու այնքան դոճի, քանի  
ոտեկից վոր կաթ և գալիս, ամելորդ գոճի-  
ներին պետք է խմացնել կովի կաթ յեղջու-  
րի միջոցով, կամ թողնել ծծելու այն մայ-  
րերին, վորոնք քիչ գոճի ունեն։ Այդ բանը  
պետք է անել չատ զգուշ, նախորոք բոլոր  
գոճիներին քսել վորեն հոտավետ նյութ,  
վորպեսդի մայրը չկարողանա իր գոճիներին  
զանազանել ոտարներից։

10. Ամառը 2—7 որական ձագերին պետք  
է մոր հետ բաց թողնել արոտ, յերբ շաղը  
կվերանա։ Գոճիներին հարկավոր է առվո-  
րեցնել արոտին աստիճանաբար 2—3 որվա-  
րնթացքում, սկզբում դրսում թողնելով  
միայն մի քանի ժամ։ Առաջին շաբաթներին  
գոճիներին հարկավոր է պաշտպանել արե-

ջի այրող ճառագայթների ազդեցությունից։  
Զմեռը, յերբ ողի ջերմությունը 5° է, գո-  
ճիներին կարելի յի 1—2 ժամ բաց թողնել  
զրուանքի, սկսած յերկու շաբաթական հա-  
սակից։

11. Զագերին ծծից կտրում են 8 շաբա-  
թական հասակում աստիճանաբար, վերջին  
4—5 որվա լնթացքում։

12. Զագերին խնամելու և մեծացնելու  
գործում հիմնականը համարվում է խողա-  
նոցի, ցամքարի և կերի ամաների մաքրու-  
թյունը։ Ենթաքը տարեկան վոչ պահաս քան  
յերկու անգամ՝ գարնանը և աշնանը պետք  
է ախտահանել և սպիտակացնել կրով։ ամ-  
բողջ ինվենտարը պետք է լավ լվացվի և  
գրվի սառնամանիքի ու արեւի տակ։

13. Պետք է հետեւի գոճիների մարմնի  
մաքրությանը, կովել վոջիների դեմ՝ պար-  
բերաբար գոճիների մարմնին քսելով բու-  
ռական յուղի և նայմի խառնուրդ (2—3 մա-  
րտասական յուղ, մեկ մաս նայթ)։

14. Ծծից կտրելուց հետո ձագերին բա-  
ժանել խմբերի, յուրաքանչյուրում 20—30  
գլուխ, նկատի ունենալով նրանց խոշորու-  
թյունը, գերությունը և ախորժակը։ Այդ  
մոմենտին նրանց մաքուր պահելը 100%—ով  
գրավական ե նրանց առողջ մնալուն։

Տարվա տաք յեղանակներին հարկավոր և  
յերկու շաբաթը մեկ անգամ գոճիներին  
լվանալ գոյ ջրով և սապոնով, յուրա յեղա-  
նակներին մրսելուց խուսափելու համար,  
գոճիներին չպետք և լողացնել, այլ միայն  
ժաքուի բռնական խոզանակով:

15. Յերեք ամսական հասակում վորձ գո-  
ծիներին պետք և բաժանել եղերից և պահել  
առանձին: Մեծ տոհմարուժական ֆերմա-  
ներում գուցե կարելի կլինի ստեղծել ա-  
ռանձին ցեխ (բաժանմունք): Ամառը դիմա-  
ցոր կերն և արոտը և ի տացըած կերը: Վոր-  
ձերը 3-6 ամսական հասակում պահվում են  
խմբիրով, յուրաքանչյուրում մինչև 100  
դուսի:

Պետք և ուշի ուշով հետեւիլ, վորպեսպի  
վորձերի մեջ սեռական վատ սովորություն-  
ներ (տնանիդմ) չզարգանան: Զմեռը այդ  
հասակի վորձերը, ինչպես և վոչ հղի մայ-  
քերը, պահվում են խմբերով, յուրաքան-  
չյուրում 50 դիմից վոչ ալելի:

Վեց ամսից հետո վարպեկները բաշխվում  
են խոզանական ապրանքային ֆերմա-  
ներին և պահվում են այնտեղ մինչև 9 ամ-  
սական հասակը, յուրաքանչյուր բաժան-  
մունքում 2-3 դուսի: 9 ամսական հարա-

կում վարպեկներին թույլ են տալիս զարգա-  
վորվելու:

16. 3-8 ամսական եղ գոճիներին ամա-  
ռը պահում են արոտում խմբերով, ամեն  
մեկում մինչև 200 դլուխ, և տալիս են  
լրացուցիչ խտացրած կեր:

Զմեռը եղ գոճիներին պահում են խմբե-  
րով յուրաքանչյուրում 50 դլուխ ութ ամսից  
հետո նրանց բաշխում են տոհմարուժական  
ֆերմաներին մայրերի քանակը լրացնելու  
համար: Մնացածներին բաշխում են իրզա-  
րուժական ֆերմաներին: Զմեռը թե վորձ և  
թե եղ գոճիներին զրուանքի յեն հանում ո-  
րական 2-7 ժամ: Գոճիներին խնամելիս պետք  
է հետեւել, վորպեսպի նրանք վաչ չափից ա-  
վելի կերպակին և վոչ ել քաղցած մնան,  
վորովհետեւ յերկու դեպքում ել նրանց  
դարձացումը կանգ և առնում:

17. Կրկին ընդգծում ենք, վոր ջահել խո-  
զերին մեծացնելիս նրանց հիմնական կերն  
է՝ ամառը արոտը և խտացրած կերերը, ձր-  
մեռը խտացրած կերերը, թիթեռնածաղիկ  
խոտերը, կենդանական հյութալի կերերը  
(յերես քաշած կաթ, չիջուկներ) և հանքա-  
յին նյութերը:

## ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ՄԱՏՂԱՇ ԽՈՉԵՐԻՆ

Մատղաչներին խնամելու և զարգացնելու  
գործում կարևոր գեր են խաղում այն կերե-  
րը, վորոնք հարուստ են սպիտակուցով և վի-  
տամիններով, այն ե՛ թիթեռնածաղիկ խո-  
տերը, վիկը, սիսեռը, վոսպը, անարատ և յե-  
րես քաշած կաթը, ձկան և միսվոսկրային  
ալյուրը, դարին, յեգիպտացորենը և վար-  
սակը: Գոճիներին փորցես տոհմացու մեծաց-  
նելիս կարեվոր ե նրանց կերակրել անարատ  
յև յերեսը քաշած կաթով, սկսելով մոտա-  
վորապես 3 շաբաթական հասակից և շարու-  
նակել մինչեւ 3 ամսական հասակը: Այդ  
հասակից ել պետք ե սկսել լրացուցիչ կե-  
րակրել նրանց գարու և վարսակի աղանձով  
(բոված): Լրացուցիչ կերը պետք ե տալ  
առանձին վանդակներում և պահպանել իրիս  
մաքրություն: Սկսած 3 ամսական հասակից  
այլևս կաթ չպետք ե տալ. գոճիների կաթի  
նորման ե՝ անարատ կաթ 10 լիտր., յերես  
քաշած կաթ 20 լիտր, յեթե կաթ չկա, կա-  
րելի յե տալ ձկան և միսվոսկրային ալյուր,  
յեթե այդ ել չկա, ապա տալ կտավհատի  
բուսպ, ծեծած սիսեռ կամ վոսպ:

Զմեռը կեր տրվերու յէ Հետեւյալ խոռ-  
ուուրդով—խոտացրած կեր 50 տոկոս, թեթև

նածաղիկ խոտ 10 տոկոս, չյութալի կեր 25  
տոկոս, կենդանական կեր 5 տոկոս և կերի  
նորմայից դուրս 1 տոկոս հանքային խառ-  
նուրդ: Դմառվա կերը՝ 50 տոկոս խոտացրած  
կեր և 50 տոկոս արոտ:

Մատղաչների համար ամենալավ արոտն  
են համարվում առվույտի, յերեքնուուկի և  
վիկավարսակի արտուրը:

Վաղ գարնան և ուշ աշնան համար ամե-  
նալավ արոտն է համարվում տարեկանի ար-  
ուր:

Ծծնից կտրելուց հետո մինչեւ չորս առե-  
սական հասակը մատղաչներին հարկավոր ե  
կերակրել որական չորս անգամ, իսկ չորս  
ամսականից սկսած որական 3 անգամ:  
Մատղաչներին պետք ե տալ մաքուր, սեն-  
յակի տաքություն ունեցող ջուր կերակ-  
րելուց 1-1,5 ժամ հետո:

## ԿՇՈՒԵԼ ՑԵՎ ՆՇԱՆ ԱՆԵԼ

Տոհմացու գոճիներին կշռում են առաջին  
անգամ ձնված որը՝ նախքան կերակրելը: Հե-  
տագայում կշռում են ամենախոչորին և առ-  
մենափոքրին, իսկ մեռած զոճիներին կը չ-  
ռում են առանձին: Երդ որը զոճիների ձախ  
ականջներին դնում են ընային (քոր) Հումո-  
րը, վորը հանդիսանում է ծնունդի համարն

բատ կարգի և ամեն տարի սկսվում է առաջին համարից :

Գոճիներին յերկրորդ անգամ կշռում են ժոտավորակն չորս շաբաթից հետո, յերբ սկսում են լրացուցիչ կեր տալ, այդ ժամանակ ել նրանց աջ ականջին դնում են դորձարանային (տոհմական) մշտական համարը :

Վորձերին դնում են կենու համարներ սկզբամ № 1-9999, իսկ եղերին դույդ Համար սկզբամ № 2-9998:

Գոճիներին յերրորդ անգամ կշռում են ծծից կարելուց յերկու ամսական հաստիություն այս անգամ բոլորին առանձին-առանձին :

Հետազայտմ ենք գոճիներին հարկավոր և կշռել յուրաքանչյուր ամսի 1-ին, դրքում դրանցներու համար, մինչև ֆերմայից դուրս դալը կամ մինչև առհմացու մերուների շարքը անդախոխելը: Սկսած վեց ամսական համարից վերացնում են բոլոր մատղաշների շամփերը (յերկարությունը, բարձրությունը և փաթը):

Գոճիներին նշան են անում հատուկ արցանով, վորը նախքան գործադրելը պետք է լրաց լվանալ սպիտով (դենատուրատով) և ուրբել: Ապա հոլլանդական մրից պատրաստում են մաստիկա, վորը մանրացնում, փոշի յեն

գարճնում. ապա այդ փոշին բաց են անում դենատուրատով և խառնում են, մինչև լոր դառնա սմետանայի պնդության չափ. շատ մուր հարկավոր չե բաց անել, 2-3 ճաշի զբարը բավական է: Պատրաստված մաստիկան հարկավոր և պահել թիթեղյա տուքի մեջ թերանը փակ: Նախքան նշան անելը դոճիների ականջները լավ լվանում են սպառնով և լավ սրբում ու չորացնում չորով:

Նշան անելու համար ընտրում են ականջի ներքին յեղերը, վորտեղ ամենից քիչ արյունատար անոթներ կան. զբոի կողմից ականջին քսում են մաստիկա, նույնպես մաստիկա յեն քսում աքցանի մեջ հազցրած թթվանշների ծայրերին, ապա քայլած տեղի վրա զնում են արցանը և սեղմերով արագ ծակում են ականջը, ապա արցանը հանում են, և 2 բոլե մատների կլոր շտրժումներով մաստիկան չփում են ականջի մեջ ծակված աեզում: Նշան անելիս գոճիներին պահում են ձեռքերի վրա՝ հետին վառքերից բունած:

Բոլոր տոհմացու մատղաշներին ծննդելիս գրանցում են նորածիների գրքում՝ նշելով յուրաքանչյուրի վրա՝ հետին վոտքերից բըռնած:

Բոլոր տոհմացու մատղաշներին ծննվելիս

ՀՀ Ազգային գրադարան



NL0301183

22.040

գրանցում են նորածինների գրքում՝ նշելով  
յուրաքանչյուր բնի (մոր) համարը:

Ծծից կտրելուց հետո 2-3 աժովա ընթաց-  
քում ամսի 1-ին դոճիներին դրանցում են  
ճատղաշների գրքում, փորձներին և եզերին  
գրանցում են տանձին, դրա համար զիրքը  
բաժանվում է յերկու մասի:

Գոճիներին ֆերմայից հեռացնելու դեպ-  
քում ջնջում են նրանց համաշերը և նշում  
հեռացնելու պատճառը:

ԽՈԶԱԲՈՒՇԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆ

---